

ցած էին նաև Եգիպտահայերը, որոնք Ֆաթիմեան սուլթաններուն կրախտաւորեալներն ըլլալով՝ պարտք մը հատուցանելու նախանձախնդրութեամբ միայած են անոնց ապստամբական շարժումներուն: Շամաթի Նուրէտօխնի ուղղեալ տեղեկագրին մէջ պարզօրէն կը յիշատակէ Հայերն ալ իբր մասնակից այդ ընդդիմադիր շարժումներուն:

1168-69էն սկսեալ քուրտերու և թուրքերու կողմէն Հայոց դէմ կատարուած ջարդերը, կրօնափոխութիւնները և հալածանքները, զոր կը յիշէ նոյն իսկ Աբուսահլ, արդիւնք պէտք է նկատել Հայոց Ֆաթիմեանց հետ միացման, որու մասին յիշատակութիւն չունի նոյն պատմիչը. թերևս քաղաքական պատճառներու հարկադրանքով, քանի որ ինք ալ ժամանակակից է շատ մը դէպքերու:

Հայոց դէմ սարքուած այդ քստմնելի արարքներն ու զըրզուները չենք կրնար վերագրել ոչ Աթապէկի Նուրէտօխնի՝ որ Ռուբինեանց պայազատները՝ Ստեփանէն և Մլինը իր մօտը պահպանեց, և զիւրացուց Թորոսի իշխանութիւնը և նոյնիսկ օգնեց Գրիգոր Տղայի կաթողիկոսական ընտրութեան (Վարդապետ, էջ 129). ոչ ալ Սալահէտօխնի՝ Դուռնեցի էյուպի որդւոյն՝ (Տէս ակոյ, էջ 131) որ Հայոց մօտ մեծցած էր եւ ծանօթ էր Հայաստանի. եւ ան իր կատարեալ հայասիրութիւնը յայտնեց, երբ 1187ին Երուսաղէմի գրաւման ժամանակ մեծագոյն մասամբ անաղարտ պահեց հայկական սրբավայրերը. ո՛չ ալ Եգիպտացի շիրական իսլամ ժողովրդեան, վասն զի վերջինս Ֆաթիմեան գահուն եւ շիրական վարդապետութեան վերականգնումին աշխատելով՝ կ'ուզէր սիրաշահիլ զրացի հայ ժողովուրդը. հետեւաբար մենք սա եզրակացութեան կը հասնինք թէ՛ սոյն շրջանին Հայոց ենթարկուած այս հարուածները՝ զոր պատճառեցին քուրտք եւ զուգք (թուրք) հաւանաբար յառաջ եկան Հայոց կամայ ակամայ միացումէն ընդդիմադրութեան տեղական հոսանքին հետ:

Եգիպտոսի Հայոց Պատրիարք Երուսաղէմ կու գայ
Եւ կը հիմնէ Ս. Սարգսի վանքը.

Աբուսահլ՝ առանց յիշելու պատճառը, մէջ կը բերէ քուրտերու և զուգերու հալածանքը Հայոց դէմ, և այդ առթիւ կը յիշէ թէ Հայոց եկեղեցիներուն շատերը գրաւուեցան և Ղպտի-